


ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԿԱՆՑԿԱՑՆԻ ARMLEGAL EXPO 2019 ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

26.03.2019 18:44



Սիրով տեղեկացնում ենք, որ 2019թ. ապրիլի 23-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը «Երևան Էքսպո» ցուցահանդեսային կենտրոնում կազմակերպում է ARMLEGAL EXPO 2019 առաջին ցուցահանդեսը, որին մասնակցելու հայտ են ներկայացրել 30-ից ավելի փաստաբանական գրասենյակներ:

Ցուցահանդեսի շրջանակում տաղավարներով հանդես կգան նաև հանրային իրավական ծառայություններ մատուցող այլ կառույցներ:

Ցուցահանդեսի նպատակն է նպաստել հանրային իրավագիտակցության բարձրացմանը և իրավական մշակույթի ձևավորմանը:

Նման ցուցահանդես Հայաստանում կազմակերպվում է առաջին անգամ: Նախատեսվում է ARMLEGAL EXPO-ի կազմակերպումը դարձնել ավանդական:

ARMLEGAL EXPO 2019-ին զուգահեռ անցկացվելու է նաև իրավական ոլորտին վերաբերող թեմաներով մասնագիտական քննարկում (ֆորում):

Էքսպոյի ընթացքում կազմակերպվելու է նաև լրագրողների և լուսանկարիչների՝ իրավական թեմաներով արված լուսանկարների մրցույթ-ցուցահանդես:

Անցկացման ժամանակը՝ 2019 թվականի ապրիլի 23, ժամը՝ 11:00-17:00

Անցկացման վայրը՝ «Երևան Էքսպո» ցուցահանդեսային կենտրոն, ք. Երևան, Հակոբ Հակոբյան փողոց 3

Կազմակերպիչ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ

Միջոցառումների հակիրճ բովանդակություն՝


- Փաստաբանական գրասենյակների ցուցահանդես.
- Մասնագիտական ֆորում-քննարկում.
- Անվճար իրավաբանական խորհրդատվություն.
- Իրավական խորագրով արված լուսանկարների մրցույթ-ցուցահանդես:

Մասնակիցներ՝

- Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ .
- Հանրային պաշտպանի գրասենյակ.
- Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց.
- Փաստաբանական գրասենյակներ.
- Արցախի փաստաբանների պալատ.
- Հանրային իրավական ծառայություններ մատուցող կառույցներ.

Մուտքն ազատ է:

Առաջարկվող նորություններ



27.03.2019 ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ՝ ARMLEGAL EXPO 2019-ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ



16.04.2019 ARMLEGALEXPO 2019 ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```